В этот день, после возложения цветов к памятнику Хач Кар, в армянской церкви состоялась литургия, посвященная памяти жертв Геноцида. А одесская областная армянская молодёжная общественная организация «АРМИР» организовала показ документального фильма «Западная Армения», чтоб каждый желающий мог познакомиться с историей, мог увидеть те земли, которые принадлежали нашим предкам. Могли увидеть города и церкви, которые армяне создали на этой земле, те прекрасные творения великих архитекторов и художников.



У Вечного огня в Ереване (Цицернакаберд)

Донецк

24 апреля в Донецке прошел ряд мероприятий, посвященных Дню памяти жертвам Геноцида армянского народа 1915 года.

В армянской апостольской церкви Сурб Хач состоялась траурная служба памяти жертв геноцида армян. Там же, в армянской школе, была размещена небольшая фотогалерея, где все желающие могли увидеть фотодокументы, на которых показана вся жестокость, проявленная по отношению к армянскому народу. Молодежь на машинах с армянскими флагами проехалась по городу, напомнив жителям о страшной трагедии армян.

В этот день в кинокофейне «Мэрилин» прошел показ фильма братьев Паоло и Витторио Тавиани «Гнездо жаворонка».

Запорожье

В память о жертвах Геноцида в еврейском культурном центре «Мозаль Тоф» состоялся показ документального фильма «Геноцид Армян» и «Холокоста». Также прошла служба в церкви и возложение свечей, лекция по теме Геноцида, был составлен стенд фотографий по тематике Геноцида, раздача листовок с информацией о Геноциде. В армянской школе «Нарек» состоялся круглый стол.

Крым

В Симферополе состоялась акция «Зажги свечу памяти», также было организовано шествие по центральным улицам, служба в церкви, на которой присутствовали первые лица Автономной республики.

Львов

Был организован Крестный ход в центре города. Транспаранты с надписями о преступлении Геноцида, осуществлённого в Османской Империи в 1915 году. А большое количество чёрных ленточек напоминало об этом трагическом дне.

Харьков, Луганск, Днепропетровск

В армянских церквях прошли панихиды. На улицах городов -– раздача листовок на тему Геноцида.

Житомир

Ровно 94 года назад в Константинополе начались массовые аресты армянской интеллектуальной, религиозной, экономической и политической элиты. В результате страшных действий по отношению к армянскому народу погибло 1,5 млн. ни в чём не повинных людей. 1,5 млн. – легко произнести эту цифру, но тяжело понять. Это численность населения таких стран, как Габон, Эстония. Даже через много лет эта трагедия болезненно переживается людьми. Каждый армянин с особым чувством относится к этому событию.

В этот день армяне и люди других национальностей во всём мире чтили память погибших. И житомирская армянская община «Эребуни» присоединилась ко всем небезразличным людям. После возложения цветов около памятника Жертв Голодомора – украинского геноцида, все желающие посетили Главный Собор. Также был организован просмотр художественного фильма Паоло и Витторио Тавиани «Гнездо жаворонка».

То, что мы не забываем этот день, означает, что мы не безразличны к жизни тех людей, которые не успели жить, творить, любить. Не безразличны к смерти, которая разрушает все наши надежды и приносит много боли и страданий; и не безразличны к нашей истории, страницы которой иногда написаны кровавыми буквами.



Траурный митинг в Житомире

Хотя мы родились не в то время и не в тот час, мы обязаны не только помнить об истории нашего государства, но и передать ее нашим потомкам.

Мы должны ясно осознавать, что наш народ боролся за жизнь и дал нам возможность называть себя армянами.

Кировоград

Был организован пеший ход и возложение венков и свечей к символу Вечного огня.

Полтава

Состоялся вечер памяти жертв Геноцида.

В Киеве прошла пресс-конференция, посвященная памяти жертв Геноцида

23 апреля состоялась пресс-конференции на тему «24 апреля – День памяти жертв Геноцида армянского народа 1915 года». «Мы народ, который имеет великую силу, великое единение. Я очень надеюсь, что мы боремся за то, чтобы эта трагедия никогда и ни у кого не повторилась. Наша национальная воля – чтобы весь мир жил в мире и согласии, и такие трагедии никто и никогда не ощущал», – подытожил Чрезвычайный и Полномочный Посол Армении в Украине А.Хачатрян. Организатором мероприятия являются члены молодёжной организации Киевской армянской общины. Так же разработаны и изготовлены специальные наклейки на автомобиль. Стикеры с надписью «24 апреля День памяти жертв геноцида армян в Османской империи» раздавали владельцам автомобилей, которые прибыли на траурную панихиду в Покровский монастырь в г. Киев.



ՀԱՏՎԱԾՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ «ԽԱՉ ԵՎ ՍՈՒՐ» ԳՐՔԻՑ

Եթե ապրում ենք թող այսպես ապրենք՝ ապրելու համար, ոչ թե ՝ ծամելու…
Եթե հավատում ենք Մեծն Աստծուն ՝ ապրենք ու գործենք տաս պատվիրանով
Ավետարանի սուրբ սկզբունքով , ազնիվ հոգով , կատարյալ հավատով ,
Որ չարը չքվի ՝բարին շատանա, որ շեքսպիրյան հարցը չլինի՝ «Լինել-չլինելու….»:
Մ. Աքյան

Ես եղել եմ 46 երկրում : Եվ ամենուր եկեղեցի եմ այցելել: Ես հավատում եմ Աստծուն: Հավատում եմ Խաչի զորությանը: Աստվածաշունչն ինձ համար շունչ է : Աստծու թելադրած գիրքն է:

Ես հաճախ եմ մտածում հայ եկեղեցու մասին: Թեքեյանն ասում է.«Եկեղեցին հայկական՝ ծննդավայրն է հոգւույս»: Գիտեմ,որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց առաջ, Էջմիածնի Կաթողիկե եկեղեցուց առաջ, սուրբ Գայանեի և Հռիփսիմեի եկեղեցիներից առաջ մենք քրիստոնեական եկեղեցիներ ենք ունեցել Գողթնում, Աշտիշատում, ուր, ի դեպ, ձեռնադրվել է Գրիգոր Լուսավորիչը (Պարթև Գրիգորը): Հետագայում,իհարկե, կաթողիկոսական աթոռանիստեր են դարձել Դվինը, Անին, Սիսը և այլ քաղաքներ,իսկ Էջմիածինը՝ նորից՝ թվին: Հայտնի է բոլորին:

Հայտնի է, թե քրիստոնիաների կողմից ինչ հալածանքների են ենթարկվել հեթանոսները,իսկ հեթանոսների կողմից՝ քրիստոնիաները: Բազմաստվածությունը փոխարինվեց միաստվածությամբ բազմակուսակցությունը՝ միակուսակցությամբ, թեև միացյալ պետականություն ստեղծելու ճանապարհին երևի պետք է նաև… միաստվածություն: Նաև խորապես ցավում եմ,որ քրիստոնեության հաստատման ճանապարհին կործանվեցին մեր հիանալի հեթանոսական մեհյանները(Արամազդի,Միհրի, Նանեի,Անահիտի,Վահագնի,Աստղիկի,Աֆրոդիտեի և այլոց:)Բարեբախտաբար՝մնացին Գառնիի հեթանոսական տաճարը և Անահիտ աստվածուհու կիսանդրին,որը կնոջս Աստղիկի հետ տեսանք Լոնդոնի Բրիտանական թանգարանում՝որպես օտարների մշակույթի նմուշ:

Բայց և այնպես՝ եթե չլիներ քրիստոնեությունը,եթե չծնվեր սուրբ Մաշտոցի գիրը,եթե չլիներ մեր խաչը և սուրը,մենք չէինք լինի:Ուղղակի հայ չէինք լինի:Լավ է, թե՝ վատ,թող դատի ամեն մարդ:Հաճելի է մտածել,որ հավատի առաջին պատերազմը շահել ենք: Այս անգամ խոսքը Ավարայրի մասին չէ:Քրիստոնեությունը ընդունելուց ընդամենը 12 տարի հետո 313 թվականին,հռոմեական Մաքսիմենոս Դայա կայսրը ցանկացավ«արմեններին պատժել» նոր կրոնի համար,բայց գլխովին ջախջախվեց հայերի կողմից: Դա կռիվ էր«Վասն Հիսուսի,վասն հայրենաց»:Աստված մեզ հետ էր: Խաչը և սուրը հաղթեցին:Ազգի մեծերը գիտեին՝ժողովրդին սուրբ հավատ է պետք՝հանուն որի կռվեն,իսկ թշնամիները չեն ուզում,որ մենք ինքնուրույն հավատ ունենանք:Հավատացյալ քրիստոնյան նա է, ով հավատում է Հայր Աստծուն,Որդի Աստծուն,Սուրբ Հոգուն:Կատարելով Աստծու կամքը,մտածում է իր ազգի փրկության մասին:

Ինչպես գիտեք,Սուրբ Մեսրոպը ժամանակին զգացել է հետևյալ վտանգը՝ հայոց եկեղեցիներում քրիստոնեությունը և աղոթքները կատարում էին հույն և ասորի քարոզիչները:

Պետք էր հայոց գիր,հայոց աղոթք, հայոց ոգի: Եվ Աստված այդ գրերը հուշեց Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Խորաթափանց և խորիմաց Խորենացին գրել է,որ Սուրբ Մեսրոպ Մաշտոցն«Ուներ հրեշտակի տեսք»: Հազար անգամ իրավացի է մեծն Պարույրը, երբ գրեց Մեծ Մաշտոցի մասին.«Ծնվեց,որ ծնվենք,եղավ,որ լինենք, և անմահացավ,որ անմահանանք…»: Իրավ են ասել,որ Մաշտոցի 36 տառ-զինվորները հաղթցին հզոր ու մեծաքանակ շատ բանակների: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը,Սուրբ Սահակ Պարթևը,Սուրբ Ղևոնդ Երեցն իրենց խաչով ու գործով հայերին հայ պահեցին,«Հայ ազգ հայ եկեղեցի՝ մի մարմին, մի հագի» նշանաբանով: Հայ եկեղեցին դարձավ «պաշտպան հայրենաց»: Եկեղեցին,ինչպես ասում են,միակ տեղն է,ուր սատանան չի համարձակվում մտնել,իսկ Քրիստոսը միակն է,որին սատանան չկարողացավ խաբել:Խաչասեր հավատացյալն ասում է.«Ոչ թե ես եմ ապրում,այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ»:Խաչը սիրել՝ նշանակում՝ Հիսուսին հետևել…

Հայ եկեղեցում ամենագլխավորը համարվել է խաչը(հետագայում ոմանք առաջին դիրք բերեցին սրբապատկերները,բայց հայի համար մնաց խաչը:Սիփանա սարի դեմ ծփող Վանա լճի Աղթամարի եկեղեցին կոչվում է Սուրբ Խաչ: Սուրբ Խաչ է կոչվել Ղրիմի Հայկական վանքը(1338թ.): Սուրբ Խաչ անունով գյուղեր են ունեցել Բիթլիսի վիլայեթում,Ստավրոպոլի նախկին մարզում: Քրիստոնյա հայորը մտածեցին՝ հարկավոր է հայկական եկեղեցիներում քրիստոնեությունը հայացնել, ազգայնացնել, տարբերակել քրիստոնեական եվրոպական և այլ հոսանքներից ու աղանդներից:Որպեսզի չձուլվենք…

Այդպես էլ վարվեց հայ Առաքելական եկեղեցին՝ նրա սուրբ հայրերից և վեհափառներից շատերը՝առաջին կաթողիկոս Գրիգորից մինչև Վազգեն Առաջին:Առաջինի ց՝առաջին:Կաթողիկոսը,ինչպես գիտեք,հունարեն բառ է, հայերեն կոչվում է՝քահանայապետ,հայրապետ,ծայրագ ույն պատրիարք, վեհափառ: Հայերը վեհափառին կոչում են կաթողիկոս,ռուսները՝պատրիարխ,կաթոլիկները՝ պապ:Ինչ մնում է տարբեր աղանդների տարածմանը,դա միշտ էլ դրսի պետությունների ծրագիրն է եղել(նաև՝ այսօր): Թշնամիներին միշտ վախեցրել և վախեցնում է հայության միասնական-միահավատ լինելը:Հարկավոր է միասնությունը քայքայել,մարդկանց իրար դեմ հանել,իսկ հոգով մասնատվողներին,իրար ատողներին հեշտ է հաղթել,տիրել,ստրկացնել:

Հայերին դժվար է հաղթել դրսից,հեշտ է՝ ներսից:

Եթե կուզեք ճիշտն իմանալ՝այսօրվա կրոնական ամենաթողությունը նույնպես Արևմուտքի հատուկ ծրագիրն է՝խարխլել հայության միասնությունը:Սա ժողովրդավարություն չէ,այլ… ժողովրդավառություն:

Հաճախ եմ մտածել, թե ի վերջո,ի՛նչ է ուզում Արևմուտքը,որ միշտ ցանկացել է հայերին կաթոլիկ դարձնել: Նպատակը՝հայերին Ռուսաստանից հեռու պահելն է, իր ազդեցությունն ուժեղացնելը, իր ազդեցության ամրամպնդելը,գաղութ դարձնելը:

Այսօր աշխարհում կա կես միլիարդից ավելի կաթոլիկ(նույնքան էլ մահմեդական): Ասում ենք՝ քրիստոնյա Եվրոպա,քրիստոնյա Ամերիկա:Նրանց հավատացյալների մեծ մասը կաթոլիկներ են:Այցելել եմ շատ եկեղեցիներ՝կ աթոլիկ,օրթոդոքս,ավետարանական,լյութերական,երից ական,բողոքական և այլն:Այցելել եմ մեջիթներ:Զրուցել եմ,օրինակ, բողոքականների հետ: Աշխարհում բողոքականների թիվը անցնում է 200 միլիոնից:Ընդունելով Աստված ու Քրիստոս, բողոքականները,ինչպես գիտեք,չեն ընդունում եկեղեցի,հոգևորականություն,ասելով, որ իրենց և Աստծու միջև միջնորդ չպետք է լինեի:Եղել են և կան հայ բողոքականներ:Կան զանազան աղանդներ,որ ուզում են մեր հոգու վրա ազդել: Ես ոչ մեկի դեմ ոչինչ չունեմ,բայց ինչպես հիսուսաբար ասել է Նարեկացին.«Վտանգված է անձս,Տեր իմ…»:

Քանի ազգ գնաց,իսկ հայը մնաց:

Որպեսզի ազգն անընդհատ մնա,պետք է անընդհատ ուժեղանա:Ուրիշ ելք չկա:Ասված է՝մեծ գազանները ճնշում են փոքրներին,մեծ պետությունները՝փոքր պետություններին:Ցավոք՝սա է գոության օրենքներից մեկը:Հայ քրիստոնյան իր հույսը պետք է դնի խաչի և սրի վրա:Դա կարող է լինել յուրաքանչյուրիս ուժեղանալով,կյանքով,մահով:Բայց հոգին անմահ է: Մեռնելով՝ մենք չենք մեռնում: Ապրում ենք երկրորդ կյանքով: Մեզ շարունակում են մեր երեխաները,թոռները,ծոռները:Եթե նրանք ազնիվ ու քաջ լինեն՝մեր պատիվն է:Հիսուսն ասում է«Հատն ցորենո եթե եչ մեռանիցի,ինքը միայն կա,ապա թե մեռանիցի՝բազում արդյունս առնե»: Հրաշալի խոսքեր: Երբեմն զարմանքով և հիացմունքով մտածում եմ՝Հիսուս Քրիստոս ոչ բանակ ուներ,ոչ պաշտոն, ոչ իշխանություն, ոչ հարստություն, ոչ գրիչ,ոչ տիտղոսներ մեծ, բայց ամբողջ աշխարհը գրավեց:Բեթղեհեմից – Նազովրեցի այդ երիտասարդը ընդամենը երեք տարում ավելին արեց, քան ուրիշները՝ երեք միլիոն տարում(նա 30 տարեկանից սկսեց քարոզել,որովհետև Հին կտակարանի համաձայն՝ իրավունք չկա մինչև 30 տարեկանը քահանա լինել…): Նա հաճույքներից զրկեց իրեն,որ մենք չզրկվենք, չսիրահարվեց-չամուսնացավ,որ մենք սիրենք ու ամուսնանանք,կին ու երեխաներ չունեցավ, որ մենք ունենանք,մահացավ, որ մենք ապրենք: Հիսուս կատարյալ մարդ էր՝ազնիվ, արդար, իմաստուն, կիրթ, հավասարակշիռ, համարձակ, սակավապետ, անձնազոհ…: Ո՛րն է նրա ամենամեծ պատգամը՝ Սիրեցեք իրար: 1700 տարվա քրիստոնյա ազգ ենք,հայ քրիստոնյա,բայց արդյոք բոլորս ենք լիովին և խորապես նվիրված Քրիստոսին:Ամեն մարդու տրված է որոշակի ժամանակ՝ապրելու և գնալու: Մենք նման ենք հերթում կանգնածների՝մեր հերթը գալիս է մի բան ենք առնում և գնում,մեզանից հետո գալիս են ուրիշները:Եվ այսպես շարունակ:Բայց եթե չհավատանք Բարձրյալին,եթե չհավատանք երկրորդ կյանքին,եթե չհավատանք հավիտենությանը և Արդար դատաստանին,եթե չապավինենք իրական Քրիստոսին և նրա կամքին,մեր կյանքը կդառնա իմաստազուրկ,տա գնապալի,մղձավանջային,անհույս:Նաև՝սխալ: Գրված է՝ պետք է երկրպագես քո Տեր Աստծուն և միայն նրան պիտի պաշտես:Կեղծիքը պատժվում է:


(Շարունակությունը հաջորդ համարում)


Армянский гроссмейстер Левон Аронян – победитель «Амбер-2009»

Армянский гроссмейстер Левон Аронян завоевал титул чемпиона 18 шахматного турнира «Амбер-2009». В последнем 11 туре Аронян, разделив очки и в партии «вслепую» и в «рапиде», одержал суммарную победу со счетом 1,5-0,5 над болгарином Веселином Топаловым. Таким образом, Аронян набрал 14 очков и, опередив чемпиона мира Ананда на пол очка, завоевал титул чемпиона международного шахматного турнира «Амбер», повторив свой прошлогодний успех.

Общий призовой фонд турнира составляет 216 тысяч евро.

Арсен Джулфалакян стал чемпионом Европы





На чемпионате Европы по борьбе, который проходил в Вильнюсе, свои выступления завершили спортсмены греко-римского стиля, выступающие в весовой категории до 74-х килограммов.

В финале Арсен Джулфалакян со счетом 3-0 победил представителя Украины Володимира Шацких и стал чемпионом Европы. Примечательно, что во всех пяти схватках, проведенных сегодня Арсеном, он не уступил сопернику ни одного очка.

Напомним, что это уже четвертая медаль для сборной Армении в Вильнюсе. До этого две бронзовые и одну серебряную медали завоевали борцы вольного стиля Жирайр Оганесян, Эдгар Енокян и Руслан Басиев.

Analitika.at.ua.

В Харькове прошел Международный турнир по вольной борьбе памяти Ованеса Саакяна

В ***Харькове состоялся представительный Международный турнир по вольной борьбе памяти МС Ованеса Саакяна. В мероприятии, которое проходило при поддержке Харьковской областной федерации вольной борьбы и ее президента, Хоменко Святослава Владимировича, приняли участие 150 спортсменов из четырех стран: Украины, России, Армении и Беларуси.***

В финале весовой категории до 55 килограммов ситуация на ковре едва не вышла из-под контроля. Харьковчанин Айказ Вартапетян и Рустам Магомедалиев из Киева с борьбы перешли на бокс. Судья успел довольно быстро погасить страсти и развести спортсменов. Обоюдной дисквалификации не произошло. Стычка закончилась в пользу Вартапетяна. Вообще в активе харьковских борцов две золотые, одна серебряная и семь бронзовых наград.

В целом, на турнире удачно выступили армянские спортсмены, как харьковчане, так и представители России и, собственно, Армении.

Вячеслав КАПРЕЛЬЯНЦ
«Канч»

Харьков попрощался с Валерием Петросовым



Харьков попрощался с В. А. Петросовым – полным кавалером ордена «За заслуги», лауреатом Государственной премии Украины, заслуженным работником жилищно-коммунального хозяйства Украины, доктором технических наук, профессором, академиком и просто… генеральным Водяным, как его называли в городе, на много поколений вперед одаренном им водой. Имя В. А. Петросова было хорошо известно за пределами нашей страны.

Он ушел весь в белом: надел свой парадный костюм с орденами и медалями, чтобы сфотографироваться в книгу «100 великих харьковчан современности» сел писать автобиографию (для того же издания). За рабочим столом в личном домашнем кабинете около 2-х ночи 2 апреля, на 70-м году, и умер – с ручкой в руке, подводя черту под прожитой жизнью...


На прошлый номер газеты областной армянской общины «Канч» мы планировали интервью с академиком. Позвонив по рабочему телефону, застали Валерия Альбертовича на рабочем месте. «К сожалению, очень занят, - ответил В. А. Петросов на предложение пообщаться, - но на следующий номер – обещаю...». Это оказалось единственным обещанием, которое он не успел выполнить.

Инна Тихонова


В следующем номере



28 мая – День независимости 1-й Армянской республики



Главный редактор «Армянского вестника» по заданию редакции побывала в Армении.



Эксклюзивное интервью Министра диаспоры Армении Г. Акопян для «Армянского вестника»



Какие города Украины примут «Евро-2012»?



«Евровидение-2009» – специальний репортаж из Москвы

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զատկական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

(Սուրբ Էջմիածին, 2009 թ. ապրիլի 12)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ Իւրոյ ի ձեռն մահուան Իւրոյ՝ յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի Նորա,եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ Աւետարանին, զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից» (Կող. Ա 22 - 23):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մեր եկեղեցիների խորաններից այսօր տրուում է մեզ մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ Սուրբ Յարութեան աւետիսը: Հաւատաւոր մեր հոգիներին վերստին հնչում է մարդկութեան փրկութեան շնորհի անգուգական լուրը, թէ մեր Տէրը՝ Քրիստոս, հաշտեցրեց մեզ Աստուծոյ հետ Իր մարմնով և Իր մահուամբ, որպէսզի ներկայացնի մեզ Նրա առաջ սուրբ, անբիծ և անարատ, եթէ ամուր ու անսասան մնանք հաւատի մէջ և անխախտ յոյսի մէջ Աւետարանի, որ լսեցինք, և որ քարոզուեց երկնքի տակ բոլոր արարածներին:

Արդարև, ո՞վ կարող էր մարդկանց կանգնեցնել Աստուծոյ առաջ սուրբ և անարատ, եթէ ոչ միայն՝ Աստուծոյ Որդին, Ով քաւեց մարդկութեան մեղքը Իր արդար ու պատուական արիւնով և Իր յարութեամբ փրկեց մարդկանց մահից ու շնորհեց ուղին յաւիտենական կեանքի: Այսօր վերստին խնդութեամբ օրհնաբանում ենք Քրիստոսին, նորոգւում ենք հաւատքով և յոյսով, որ քարոզութիւնն է Աւետարանի, քանզի յարուցեալ է Փրկիչն աշխարհի, և մենք յուսացեալ ենք Նրա պարգւած փրկութեան շնորհին:

Աստծուն հաւատալը Նրա գոյութեան մասին սոսկ իմացութիւնը չէ, այլ Աստծուն սիրելը, Աստուծոյ Խօսքը ընդունելը, ինչպէս ուսուցանել են մեզ մեր հայրերը, և կենարար այդ Խօսքով առաջնորդուելը: Հաւատքը թանկագին աւանդ է, հոգու կենդանութիւնն ու լոյսն է, որը պիտի պահպանել, խնամել, սնուցել ու աճեցնել, որ այն որւ է մտածութեամբ, խօսքով կամ գործով չվնասուի ու չաւերուի մեր հոգում:

Հաւատքը Քրիստոսով, Ով «ճշմարիտ պատկերն է աներւոյթ Աստուծոյ», մարդկանց հանդէպ աստուածային սիրոյ ու ողորմութեան ճանաչումն ու փառաւորումն է և այդ սիրով ապրելը: Իր առաքելութեան ընթացքում մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, յաճախ էր խօսում հաւատքի կարւորութեան մասին: Նա ուսուցանեց և հրաշագործեց առաւելաբար այնտեղ, ուր հաւատք գտաւ և տրտմեց ու վշտացաւ, երբ չգտնուեց յուսացեալ հոգի, հաւատք Աստուծոյ հանդէպ, այլ միայն՝ արտաքին ձւ աստուածպաշտութեան: Տէրը միշտ մեզ հետ է, եթէ մենք աներկմիտ հոգով Նրա հետ ենք: Իսկ ուր Տէրն է՝ ազատութիւն է, ճշմարտութիւն է, արդարութիւն է, սէր ու խաղաղութիւն է: Ուր Տէրն է՝ փրկութեան շնորհ է, բժշկութիւն, մխիթարութիւն, յարուցեալ հոգի է, յոյս է և հաւատք:

Հաւատքի հրաշքն է պատմում մեզ Սուրբ Գիրքը. կոյրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրուում, մահացածները յարութիւն են առնում: Այս ամենը տեսնելով և Տիրոջ կենարար խօսքը լսելով՝ մարդիկ հետւ ում էին Նրան՝ հաւատալով, որ իրականացել են Փրկչի մասին մարգարէութիւնները: Հաւատքը սասանուեց, և յուսալքութիւնը համակեց մարդկանց Քրիստոսի խաչելութիւնից յետոյ: Երկիւղը համակեց անգամ Տիրոջ աշակերտներին, ովքեր շփոթուած ու տարակուսած էին, երբ յարուցեալ Քրիստոս յայտնուեց նրանց մէջ և խօսեց նրանց հետ: Նոյն Տէրն էր առաքեալների աչքերի առջւ՝ Նա, Ով խաչուեց և գերեզման դրուեց և Ում տեսնում էին, ահա, յարուցեալ: Այդժամ լուսաւորուած մտքով՝ առաքեալները հասկացան, որ մարդկութեան համար բացուել է փրկութեան՝ մահուանից կեանք առաջնորդուելու ճանապարհը: Ու մինչ այդ, եթէ վախեցած և յուսաբեկ էին, այլւ մահից աներկիւղ տարածեցին Աւետարանը, որ յարուցեալ է Քրիստոս՝ Փրկիչն աշխարհի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր և միշտ յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ նորոգելու համար կեանքը, վերափոխելու աշխարհը: Յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ հաստատելու աստուածսիրութեան և մարդասիրութեան ընթացքներում, որպէսզի մերժուեն սուտը, անարդարը, նախանձն ու ատելութիւնը, վերանան արհաւիրքն ու պատերազմը, ցաւը, հոգսը, կարիքը, և Աստուծոյ շնորհն ու ողորմութիւնը մարդկային կեանքում առատանան այնպէս, ինչպէս երկիրն է ստանում երկնքից լոյս, ցող, անձրւ և կանաչում է, ծաղկում ու պտղաբերում: Սակայն ի՞նչ կարելի է սպասել, ի՞նչ հեռանկար յուսալ, եթէ արարչաստեղծ կեանքը հաստատուի աստուածային ճշմարիտ սիրուց, աստուածային լոյսից հեռացող, Աստծուն ուրացող հոգու մէջ, ի՞նչ հեռանկար, եթէ ոչ այն, որ «չար ու խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան» (Բ Տիմ. Գ 13): Գալիքի յոյսը Աստուած է՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, Ով պարգւ ում է մարդկանց զօրութիւնը յարուցեալ կեանքով ապրելու, միշտ դէպի բարին ընթանալու, դէպի խաղաղ, բարօր, ապահով ու արդար աշխարհ:

Քրիստոսով իր փրկութեանը, կեանքի նորոգութեանը հաւատաց և մեր ժողովուրդը՝ հաստատուելով անշարժ վէմին Աւետարանի քարոզած յոյսի և հաւատքի: Առաքեալների, առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ու բազում սրբերի հաւատքով յարուցեալ Քրիստոս քայլեց մեր երկրում, լուսաւորեց մեր ժողովրդի կեանքը, օրհնեց մտքի և հոգու արգասիքներով, զօրացրեց և յոյսով պահպանեց փորձութիւնների ու նեղութիւնների մէջ: Փրկչին ապաւինած՝ մեր ժողովուրդը վեր յառնեց մահուան խորխորատներից և յարուցեալ իր նոր կեանքը վերընձիւղեց, իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց ու թէւ տարագիր ու աշխարհասփիւռ՝ մնաց համախումբ ու միասնական, հաւատաց արդարութեան յաղթանակին, ազատութեան իրաւունքին, բարիով ու բարիքով կեանքի վերափոխմանը, խաղաղ աշխարհի տեսիլքին:

Այս հաւատով ու ձգտումներով, սիրելի հաւատաւոր զաւակներ, այսօր ջանում ենք բարգաւաճ դարձնել Հայաստան և Արցախ մեր հայրենի ազատ երկիրը, զօրացնել եկեղեցական և ազգային մեր կեանքը ի սփիւռս աշխարհի: Մեր յոյսերի ու նպատակների իրագործման և մեր օրերի դժուարութիւնների յաղթահարման համար ուղեկից դարձնենք մեզ միմեանց հանդէպ տէրունապատուէր սէրը, յարգանքը, ազնուութիւնն ու վստահութիւնը, հոգածութիւնն ու աջակցութիւնը, որ հիմքն ու ամրութիւնն են եկեղեցական ու ազգային մեր կեանքի, ընտանիքների, ընկերութեան, բարեկամութեան ու արդիւնաւոր գործակցութեան: Այդ արժէքներով են խնամուում և բարգաւաճում պետական ու հասարակական կեանքի կառոյցները և ծառայում ընդհանուրի բարիքին: Այդ արժէքները պիտի օգնեն մեզ յատկապէս այսօր, տնտեսական անհաստատ իրավիճակներում, առկայ խնդիրների ու մտահոգութիւնների պայմաններում գտնելու հաստատուն և բարեյոյս ուղիները, Հայրենիքում և Սփիւռքում կեանքի կոչելու բարեբեր գործեր: Այո, աներկիւղ, «բարձրագլուխ պարծենում են» ու պիտի պարծենան ճշմարիտ հաւատքն ու հաւատի գործերը: Հաւատաւոր հոգու ազնիւ արգասիքները ամեն ասպարէզում, ամեն քայլափոխին իրական տեսնելով է, որ մեր զաւակները պիտի սովորեն դրանցով ապրել, ընտանիք սիրել, ընկեր սիրել, Հայրենիք և Աստուած սիրել: Արդ, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, հանդերձաւորուած Տիրոջ փրկութեան պարգւ ներով, հաւատքով ու



յոյսով միշտ նորոգելով մեր հոգիները՝ սիրով, միաբան, միասիրտ ու միակամ ծառայենք ազգային մեր բոլոր իղձերի ու նպատակների իրագործմանը: Եւ Տէրը, որ միշտ մեզ հետ է, տեսնելով մեր բարի գործերը, պիտի վարձատրի մեզ յարուցեալ կեանքով:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան բերկրալի աւետիսով և եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Քոյր Եկեղեցիների հոգւոր Պետերին՝ հայցելով Տիրոջ շնորհով լեցուն բազում արգասիք իրենց հոգւոր առաքելութեան մէջ: Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին և հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի և մաղթում բարօր կեանք, բարի ծառայութիւն ու առատ արդիւնք:

Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն և Տիրոջ շնորհների հայցով մաղթում նոր յաջողութիւններ՝ ի սէր մեր Հայրենիքի և հանուր հայ կեանքի:

Ամենայն բարեաց մաղթանքով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Թող Բարձրեալի հզօր Աջը հովանի լինի Ձեզ, Ձեր ժողովուրդներին ու երկրներին, պետական այրերին՝ ժողովուրդների բարեկամութեան զօրացման աստուածահաճոյ առաքելութեան մէջ:

Փրկչի Յարութեան հոգենորոգ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի սփիւռս աշխարհի, միասնական մեր աղօթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ պարգւ ած փրկութեան հաւատն ու յոյսը բոլոր մարդկանց հետ լինեն, մխիթարեն նեղութիւնների մէջ, զօրացնեն դժուարութիւնների մէջ ու պահպանեն հաստատուն աստուածասէր ճանապարհներին: Թող Տէրն օրհնի մեր ժողովրդին՝ ընթանալու դէպի խաղաղ ու բարեբեր հանգրուաններ՝ օրհնութեամբ, շնորհով ու ողորմութեամբ լեցուն: Ամուր ու անսասան մնանք հաւատքի մէջ և անխախտ յոյսի մէջ Աւետարանի, որպէսզի յարուցեալ մեր Տէրը՝ Փրկիչ, ներկայացնի մեզ Բարձրեալ մեր Հօր առաջ անբիծ ու անարատ՝ Աստծուն յուսացեալ բոլոր հոգիների հետ:

Փառք ամենազօր Յարութեան Քո, Տէր, այսօր և յաւիտեան. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Редакция

Учредитель:
Всеукраинская Ассоциация Общественных Организаций «Союз Армян Украины»

Редакция :
Ответственный за номер: Артем Караджян
Директор: Тигран Авакян
Главный редактор: Медеа Атян
Редакторы: Мгер Мнацаканян
Давид Давтян
Журналист: Анна Каграманян
Рекламный отдел: Ерванд Ервандян

Редакционная коллегия :
Председатель : Айк Памбухчян,
Самвел Тигранян, Гагик Шахазизян,
Сурен Сардарян, Эдуард Хачатрян,
Мирослав Торосян, Андрей Киян,
Артур Бейбутцян

Адрес редакции:
01601, г. Киев, бул. Леси Украинки, 34, оф. 502
Тел./факс: (044) 461-9122
г. Одесса, Гагаринское плато 5, Армянский культурный центр
Редакция газеты: av@sau.in.ua
Секретариат САУ: info@sau.in.ua
www.sau.in.ua

Подписной индекс 96301
Всю ответственность за точность и содержание рекламной информации несет рекламодатель.
Отпечатано в типографии «Черноморье», г. Одесса, пл. Независимости, 1
Тел.:(0482) 65-00-21.
Тираж 10 000 экз. Заказ №
Свидетельство о регистрации КВ №11156-36Р от 13.04.2006 г.

ОБРАЩЕНИЕ КО ВСЕМ АРМЯНАМ УКРАИНЫ

ГОЛОСУЕМ 12 МАЯ ЗА №6

ՄԵՆՔ
6-րդ
ՀԱՄԱՐՆ ԵՆՔ
ՄԱՅԻՍԻ 12

INGA ANUSH

ARMENIAN participants at Eurovision 2009

Уважаемые ветераны!
Поздравляем Вас с Днем Победы!
Желаем Вам крепкого здоровья, долголетия. Пусть в этот светлый праздник уйдут из Вашей жизни болезни и беды!
Низкий поклон и благодарность Вам за то, что подарили нам будущее и мирное небо над головой!

Союз Армян Украины